

Կ-220¹-15.12.2017,23.02.2018-ՖԿ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՔԱՆԿԵՐԻ, ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. “Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին” Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23.5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

“1. “Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնակից կազմակերպության կամ կենտրոնացված թողարկողի սնանկության (անվճարունակության) դեպքում, հիփոթեքային կառավարիչը ռեգիստրում գրանցված ակտիվները և հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունները, որպես մեկ ամբողջություն, Կենտրոնական բանկի թույլտվության հիման վրա փոխանցում է այլ թողարկողի սույն հոդվածով սահմանված կարգով:

Ընդ որում, մասնակից կազմակերպության սնանկության (անվճարունակության) դեպքում, վերջինիս այն ակտիվները, որոնք ապահովվում են կենտրոնացված թողարկողի կողմից այդ մասնակից կազմակերպությանը տրամադրված ապահովված վերաֆինանսավորման վարկերը, կարող են փոխանցվել կենտրոնացված թողարկողին կամ՝ վերջինիս համաձայնությամբ՝ այլ՝ անվճարունակ չձանաչված թողարկողին, ներառյալ՝ մասնակից կազմակերպությանը:”

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՔԱՆԿԵՐԻ, ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. “Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին” Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23.5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

“1. “Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնակից թողարկողի կազմակերպության կամ կենտրոնացված թողարկողի սնանկության (անվճարունակության) դեպքում, հիփոթեքային կառավարիչը ռեգիստրում գրանցված ակտիվները և հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունները, որպես մեկ ամբողջություն, Կենտրոնական բանկի թույլտվության հիման վրա փոխանցում է այլ թողարկողի սույն հոդվածով սահմանված կարգով:

Ընդ որում, մասնակից թողարկողի կազմակերպության սնանկության (անվճարունակության) դեպքում, վերջինիս այն ակտիվները, որոնք ապահովում են կենտրոնացված թողարկողի կողմից այդ մասնակից թողարկողին կազմակերպանը տրամադրված ապահովված վերաֆինանսավորման վարկերը, կարող են փոխանցվել կենտրոնացված թողարկողին կամ՝ վերջինիս համաձայնությամբ՝ այլ՝ անվճարունակ չճանաչված թողարկողին, ներառյալ՝ մասնակից թողարկողին կազմակերպանը.”

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ամփոփաթերթ

«Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակ	Առաջարկություն	Դիրքորոշում	Գլխադասային հանձնաժողովի որոշումը առաջարկի վերաբերյալ
<p align="center">ՀՀ կառավարություն</p>	<p>1.«Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ենթակետերի, 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի ենթակետերի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:</p>	<p align="center">Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>	<p align="center">Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:</p>
	<p>2.Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «այլ էական տեղեկություններ» ձևակերպումն ունի գնահատողական բնույթ, ուստի ունի հստակեցման կարիք, քանի որ պարզ չէ, թե Նախագծի իմաստով որ տեղեկությունները կարող են համարվել էական:</p>	<p align="center">Ընդունվել է : Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասից հանվել են «այլ էական տեղեկություններ» բառերը:</p>	<p align="center">Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:</p>
	<p>3.Նախագծի 31-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենքի 31-րդ</p>	<p align="center">Ընդունվել է:</p>	<p align="center">Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել</p>

	<p>հողվածով» բառերը փոխարինել «սույն օրենքի 28-րդ հողվածով» բառերով, քանի որ պատասխանատվություն առաջացնող օրենսդրության խախտումները նախատեսվում են Նախագծի 28-րդ հողվածով:</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>	<p>է:</p>
	<p>4.Նախագծի 34-րդ հողվածում «բ» պարբերություն» բառերը փոխարինել «բ» ենթակետ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հողվածի դրույթները:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>	<p>Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:</p>
	<p>5.«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հողվածում «մասնակից թողարկող» բառերը փոխարինել «մասնակից կազմակերպություն» բառերով:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>	<p>Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:</p>